Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«17» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ. N 263-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ԱՐԱԲԿԻՐ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով և 2-րդ կետով, 17-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի «Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սուսաննա Դանիելյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին» N 260-Ա հրամանի համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքներով ներկայացված եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սուսաննա Դանիելյանի նկատմամբ կիրառել գործունեության կասեցում՝ մինչև վեց ամիս ժամանակով կարգապահական տույժը և նրա աշխատանքային գործունեությունը կասեցնել մեկ ամիս ժամանակով՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ից 2013 թվականի հունվարի 18-ը ներառյալ:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ